ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

գ. Ծովինար «24» «09» 2019թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս. Բալոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մանուկյան, Հ. Գալստյան
Հանձնաժողովիքարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով՝

- <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (գնահատման թերթիկները, որակավորման փաստաթղթերը և եզրակացությունը կցվում է)՝
- <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները՝ հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ անգործության ժամկետ չսահմանելով:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարութունը հրապարակելուց հետո ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ս. Բալոյան

Անդամներ՝ _____ Ա. Մանուկյան

_____ Հ. Գալստյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան